

— Թէհրանէն Անգղիական լրագիրներու քա-
շուած հեռագրալուրք կը ծանուցանեն թէ՛
Շէյխ Ուպէյտուլլահ և իւր մեծ որդին Ալի—
իւլ—Գասթըր իրենց հրամանները և գտնուող
մարդոց մէկ մասին հետ թուրքիս անցեր են :

— Կոստանդնուպոլսոյ Պարսկական դեսպանա-
տունն Բարձրագոյն Գրան ծանուցանելով Քրդաց
Պարսկաստանի մէջ գործած սոսկալի ոճիրներն
խնդրել է որ Շէյխ Ուպէյտուլլահ և իւր երկու
որդիքն ըստ օրինի պատժուին :

— Կ'ըսուի թէ Գերմանական դեսպան Հաճ-
ֆէլտ կոմսն խորհուրդ տուած է Բարձրագոյն
Գրան որ Հելլենական սահմանագծի խնդրոյն
դիւրապէս լուծման համար վեց մեծ տէրու-
թեանց միջնորդութիւնը խնդրէ , որով կը յու-
սացուի թէ թուրքիոյ և Յունաստանի մէջ սպառ-
նացուած պատերազմին առաջին կրնայ առ-
նուիլ : Սակայն ուրիշ հեռագիրք կը ծանուցանեն
թէ Հելլենաց թագաւորն ի պատասխանի տե-
րութեանց կողմէ իրեն տրուած խրատին որով
համբերութիւն կը պատուիրուէր , յայտարարել
է Գերմանական դեսպան Պ. Բատովիցի թէ աւե-
րի նախամեծար կը համարի պատերազմը քան
ներքին խռովութիւնները , և թէ իրաց այս վի-
ճակին մէջ տակաւին յոյս կը տածէ որ տէրու-
թիւնք՝ պիտի չյապաղին պէտք եղած միջնոր-
դութիւնն ընել : Ասով հանդերձ զինուորական
պատրաստութիւնք անդու կը շարունակուին ,
Կառավարութիւնն հրաման ըրեր է 10 նոր վաշտ
կազմել , 40 լաստանաւ , 15 ծովաւազան նաւ
և 100 դեղարան բանակի : Նաև յաջողել է 100
միլիոն ֆրանքի փոխառութիւն մի կնքել Փարի-
զի մեծ պանքաներէն :

— Քիւմէրաւ Ռուս գնդապետը սպաննող վէ-
րի Մէհմէտի մտային վիճակը քննելու և տեղե-
կագիր տալու պաշտօնիւ կազմեալ յանձնախումբն
ամիս մը պայմանաժամ խնդրած է իւր քննու-
թիւններն կատարելու համար : Սոյն յանձնա-
խումբին մէջ գտանին Հօպարթ և Պէյքըր փաշայք ,
սոքթօր Մօնճէրի և բաւական զինուորական
և քաղաքային բժիշկք :

— Աթրէք անուն շոգենաւն , որ Գաղղիական
Ֆրէսինէ ընկերութեան կը պատկանէր , այս
վերջերս Մէլանիկէն վորոս երթալու միջոցին
լէֆթէնի կոչուած ժայռերուն խրելէ և բաւա-
կան օգնութիւններ փուճը երթալէ զինի ամ-
բողովին խորտակուել է . բոլոր ուղեորներն
ազատուել են , իսկ վաճառքներէն խիստ քեչ
բան :

— Վեհափառ Սուլթանին նախագահութեամբ
յատուկ յանձնախումբ մի կազմեալ է Տուլչինեօ-

յէն գաղթող իսլամ ժողովրդեան օգնութեան
համար : Սոյն յանձնախումբի անդամք են կաղի
Ահմէտ Մուխթար փաշա , Նուսրէթ փաշա , Էտ-
հէմփաշա , Վէլի Ռիզա փաշա , Գաղաղեան Յա-
կոր էֆէնտի և այլ բարձրաստիճան Անճինք :
Սոյն յանձնախումբին առաջին գործը պիտի լինի ,
կ'ըսուի , Օսմանեան ազգին դիմելու դրամական
նպաստ խնդրել յիշեալ գաղթականաց տեղա-
ւորման ծախուց համար : Յանձնախումբին մի ու-
րիշ որոշումն է որ սոյն գաղթականք յԱլպանիա
գտնուած կայսերական ազարակներուն մէջ տե-
ղաւորուին :

— Յայտնի է որ Միտիլիի մէջ այս վերջերս
պատահած դէպքն բաւական կարեւորութիւն
առնուլիսաւ : Յիշեալ դէպքին համառօտ պատ-
մութիւնն է այս . Մի քանի իտալացի ձկնորսք
Օսմանեան Արշիպեղազոսի կուսակալութեան
ըստ օրինի արտօնագիր ունելով Միտիլիի շրջա-
կայ ծովափունքը ձկնորսութիւն կ'ընէին : Տի-
միթրիօս Լամպրիտիս անուն Յոյնը քառասնի
չափ զիւղացիներ թելագրելով կը զրկէ զանոնք
որ իտալացի ձկնորսները վանեն : Չկնորսք իմա-
ցընելով նոցա թէ իրենք օրինաւոր արտօնագիր
ունին , ուստի և իրենց իրաւունքն է ձկնորսու-
թիւն ընել , գիւղացիք մտիկ չեն ըներ և կ'ըս-
կին՝ հրացան պարպել ձկնորսաց վերայ : իտա-
լացիք տեղական կառավարութեան կը բողոքեն ,
բայց օգուտ մի չեն տեսներ . որովհետև , կ'ըսէ
իտալական Հիւպատոն , կղզոյն Կառավարին
մասնաւոր բարեկամութիւն ունի եղեր յիշեալ
Տիմիթրիօս Լամպրիտիս հետ : Սակայն Հիւպա-
տոնին սոյն յայտարարութեան ներհակ վերջին
լուրերն ծանուցին թէ Տիմիթրիօս Լամպրիտիս
ձերբակալուած է :

— Վեց տէրութեանց Գեսպանք հաւաքական
ծանուցադրով մի առաջարկել են Բարձրագոյն
Գրան որ յանձնաժողովի կազմուի , որոյ պաշ-
տօնն պէտք է լինի որչափ այն սահմանագիծն
որոյ կտրուութիւնն պարի եղած է Տուլչինեան
Մօնթէնէկրօյի յանձնուելուն վրայ :

— Չմիւռնիայէն յԱյտըն հաստատուած եր-
կաթ ուղւոյն գիծը մինչև Սէրայ—Կէօյ յառաջա-
ցընելու և նոյն երկաթուղւոյն թուրքալը ըսուած
կայարանէն սկսեալ Պայընտըն և ուրիշ մի քա-
նի կարեւորութիւն ունեցող տեղերէ անցնելով
գէպի թիւրէ գիծ մի ևս հաստատելու համար
արգէն եղած որոշման գործադիր տեսուչ կար-
գեցաւ Բէշաս պէյ , որ 24 տարի առաջ յիշեալ
երկաթուղւոյն և յետոյ Չմիւռնիայէն Գասապա
գնացող երկաթուղւոյն հաստատութեան վերայ
կայսերական տեսուչ կարգուած էր :

չինայէ Յարութիւն էֆէնտի ջանքերուն , Կա-
ռավարութիւնն իրենյատուկ բժիշկ մ'առնել ,
սոքթօր Պարթիլին որ քաղցրաբարոյ և իւր սր-
հետտին հմուտ ու գործունեայ մարդ մի է . իւր
պաշտօնն է կղզոյն բուսային և կենդանային
դասերու վերայ ճարտարութեամբ խորունկ կամ
հիւանդութեանց առաջին առնուլ և անմիջա-
կան գարմաններ գործադրել : Եղբունական գէպ-
քերու մէջ ալ քննութիւններ , վերաբուժական
գործողութիւններ կը կատարէ , և տեղեկա-
գրով մի կառավարութեան կը ծանուցանէ իւր
քննութեանց արդիւնքը :

Յոյն երիտասարդութիւնը հոս աշխխանձելի
վիճակ մի ունի . շատ քաղաքակիրթ , ուսեալ ,
արհեստագէտ և բանիբուն երիտասարդներ
կան , որք իրենց անձնական զբաղմանց հետ մի-
ասին չեն մոռնար նաև հայրենեաց և ազգին
համար ալ զբաղել : Ծովեղբերքի կողմն եռայարկ
չէնք մի կայ , որոյ երկու յարկը վեց անուղղակի
արոց մաքսատունն է . իսկ ամենէ բարձր յար-
կը , որ ծովահայեաց խիստ զուարճալի դիրք մի
ունի , Յունաց ընթերցատունն կամ իրենց ա-
սուածքով չէրպէն է : Կոստանդնուպոլսոյ մէջ
հրատարակուած ամեն տեսակ Յունական լրա-
գիրներ , ինչպէս նաև Ֆար տիւ Պոսֆօր լրագի-
րը , Փարիզի մէջ հրատարակուող իլիւստրացիօն
պատկերալրագ հանդէսը և ըլլելու տէ տէօ Մօնտ
անուն բանասիրական և գիտական կիսամսեայ

— Հեռաեալը կը կարգաւք Մասիս լրագրոյ
2,278 թուոյն մէջ :

Հայկական քաղութեան մէկ ակներև վորձն
այս օրերս բաւական կ'ըզբաղեցընէ Բերայիլ և
Կ. Պօլսոյ հասարակութեանց միտքը : Եւրոպայի
կէ մ'ի վեր մայրաքաղաքի մէջ Պ. Տոպլիէ ա-
նուամբ Գաղղիացի հռչակաւոր ըմբիշ մը կը
գտնուի , որ մինչև ցարդ իւր դէմն ելած տե-
ղացի և օտարազգի բոլոր ըմբիշներն զգետնած
է : Երբեմն ըմբիշութիւն ըրած բեռնակիր Սիմօն
անուն Սեբաստացի Հայու մը համբաւն այս Գաղ-
ղիացոյն ականջն հասնելով , կ'ուզէ մրցիլանոր
հետ , և նախ ինչինչ խոստումներով արեւելեան
ըմբիշութիւն կը սովոր պարզամիտ բեռնակրէն :
Սոյն երկու ըմբիշք հինգ ըմբիշ գիշեր Գոնքոր-
տիայի թատրոնին մէջ ճակատեցան ի ներկայու-
թեան խուռն բազմութեան մը . Պ. Սիմօն իւր
հակառակորդը վերցուցածին պէս օղին և երկ-
րին մէջտեղը հետաքրքրական դիրք մը տուաւ
անոր , և հանգիստականաց հարցընէլ յետոյ թէ
մը կողմը պէտք է նետել այս աւերադք բեռը ,
գլորեց բակին վրայ նետեց զՊ. Տոպլիէ : Սա
աւարկեց թէ արեւելեան եղանակաւ մրցած է-
ին . բայց եւրոպական մրցման ժամանակ ալ , Պ.
Սիմօն բռնեց նետեց իւր հակառակորդն , որ
օղին մէջ ծածանած միջոցին գնաց թատրոնին
աթոռներուն վրայ ինկաւ : Հանդիսականք
բուռն ծափահարութեամբ ողջուցեցին Հայ
կտրիճը : Մեք ևս կը ծափահարեմք սա մասնա-
ւոր նկատողութեամբ թէ մինչեւեւ Պ. Տոպլիէ
լաւ սնած քաջավարժ ըմբիշ մ'էր , Պ. Սիմօն
պանիր հասցովապրող բեռնակիր մ'է , որ երկար
ժամանակէ ի վեր ըմբիշութեան և երկ կենսական
խնդրով մը կ'ըզբաղի :

Կը ըսեմք թէ Պ. Սիմօնի առաջարկուել է ան-
գամ մը դիտմամբ յայտնուիլ Պ. Տոպլիէէն , փո-
խարէն ստանալով 50 ոսկի : Թէ այսպիսի ստոր-
նութեան մ'առաջին առնուլ և թէ խեղճ բեռ-
նակիրը քաջալերելու համար , ի նպաստ անոր
հանգանակութիւն մը բացուած է , որուն կը
վերաբերի հեռաեալ նամակը զոր ստացանք այս
տաւառով .

... Տէր ,
Հանցեքք Ձեր պատուական թերթին միջոցաւ
ծանուցանել բովանդակ Հայոց թէ միւսիւ Տուպ-
լիէ վիննաւասաներորդ գարու Հերակիէս անուա-
նեալ Գաղղիացին վար նետող մեծահամբաւ Հայ
Պ. Սիմօն ըմբիշն օգնութիւն մը ըլլալու նպաստ-
կաւ հանգանակութիւն մը բացուած է հեռե-
ւեալ տեղերն .

Ղալաթա Ատա խան , թիւ 9 , Յովհաննէս Է-
ֆէնտի Արշակունիի սենեակը , և

հանդէսը կը գտնուին . և ուր կը յաճախեն ա-
մեն օր վաճառականք , գրագիրք և ուսումնա-
կանք կարգալու համար . գիշերները նոյնպէս
մինչև ըստ եւրոպացւոց ժամը 11 բաց է այս
քըլլալը : Չատ սենեկի մէջ գրագարան մ'առու-
նին , ուր սովորուած են օգտակար մատենաք
Գաղղիացէն , Յունացէն և իտալացէն լեզուաւ :
Միտիլիի օղէս փոքրիկ կղզւոյ մի Յոյն ընթեր-
ցատան և Յոյն հասարակութեան այս աստիճան
ընթերցատիրութեան կարի նախանձելի վիճակը
տեսնելով , մեր Չմիւռնիոյ ընթերցատան և մե-
րայնոց ընթերցատիրութեան յետագէ մ'իճակը
միտքս ընկաւ , և չկրցայ զբացած վիշտս ծած-
կել : Ինձ այնպէս եկաւ որ թէ դպրոցաց , թէ
ընթերցատանց և թէ այլ յառաջադիմական
հաստատութեանց մասին Չմիւռնացի Հայք պի-
տի չլինան բաղդատութեան մասնէլ Միտիլիի
Յոյն հասարակութեան հետ անգամ :

Յոյնք Միտիլիի մէջ բարեկարգ և արդիւնա-
ւոր ուսումնարան մի ունենալէ զատ , կղզւոյն
վաթսունէ տուելի գիւղերուն մէջ ալ նախա-
կրթարաններ ունին , և այս նախակրթարանաց
վարժապետներու մեծ մասն կոստանդնուպոլսոյ
Յունաց վարժապետական ակումբը կը զրկէ :
Միտիլիի գլխաւոր գիւղերն են հետեւեալնե-
րը . Այասու , Անամաթօ , Սքունտա , Իբիօս , Քա-
թօթօթրիօս , Գիւրամիս , Գոմիլի , Փիեէի , Յէր-
միլի , Միսթիղնա , Մանտամանտա , Սքամեա ,

քննութիւն կ'ընէ և ըստ այնմ պատիժ կու տայ .
ամեն բանի մէջ իրեն ուղեցոյց բռնած է մի մի-
այն պետական օրէնքը , և օրինաց առջև մեծ
ու պղտիկ չի՞ողուր երբէք որ խտրութիւն կամ
բացառութիւն մի գործեն : Յանրաւի կամ
զբաղարտութեամբ բանտարկելոց անմեղութիւ-
նը ստուգելէ ետքը բանտէն կ'արձակէ և այս-
պէս կարող կը լինի եղած գանգատներուն առ-
ջևն առնելու : Շրջակայ գիւղերու մէջ կատա-
րուած փոքրիկ յանցանքներն անգամ իրեն նկա-
տողութեան չեն վերաբեր , անձամբ կ'երթայ և
պէտք եղած քննութիւններն ընելէ վերջը յան-
ցապարտները ի Միտիլի բերել կու տայ հարկ
ու պատշաճը գործադրելու համար :

Օրն ի բուն կ'աշխատի , ամեն ջանք և աշխա-
տութիւն կը զոհէ կառավարութեան գործոց
ուղղութիւն և կանոնաւորութիւն տալու հա-
մար . Գիւղիներն ընդ միշտ կը յորդորէ որ իրենց
պաշտօնին մէջ անվրէպ , ճշգրտապէս և աշխատող
լինին , սպառնալով որ եթէ փոքրիկ զանցառու-
թիւն մի ընեն՝ պիտի արձակէ զիրենք իրենց
պաշտօնէն : Տեղացիք շատ ուրախ են որ կառա-
վարութեան քով Պոսպիլեան Յարութիւն էֆէն-
տի պէս պաշտօնեայ մի կարգուած է հասարա-
կութեան գործերը տեսնելու համար , և մեծ
յոյս ունին որ իր օրով Միտիլիի մէջ կանոնաւո-
րութիւնն աւելի պիտի հաստատի , երբ միւս
կողմէ ոստիկանութիւնն ալ իւր աշխուղութիւնը

Կրթականի խան, թիւ 8, Գեորգ Էփէնտի փո-
մեանի սենեակը :
Նոյեմբեր, 1880 Մնամ յարգանք
Ղալաթիա : Տիգրան Զօրայեան :

ԱԶՓԱՅԻՆ

Կեդրոնական Ազգային ժողովն, հանրական
գործոց բարեօրոք տեսչութեան, և վարչական
գործոց արագ շարժում և աւելի կանոնաւոր
ուղղութիւն մի տալու նպատակաւ ասիէ առաջ
բարձր նիստին մէջ քուէարկութեամբ նոր
բէնք մի հաստատած էր որոյ տրամադրու-
թեանց համեմատ Ամեն Ս. Պատրիարք Հայրն
վարչական նոր խորհուրդն կազմելով այժմ յիշ-
եալ խորհրդոյ կազմուած լինելն և Կ.Պոլսոյ թա-
ղական խորհրդոյ նոր խորհուրդին հետ ազգայ-
ին գործողութեանց մասին ունենալու յարա-
բերութիւններն զեկուցանող Շրջաբերականներ
յուզարկած է համայն թաղական խորհրդոց :

Յիշեալ վարչական նորակազմ խորհրդոյ ան-
դամներն են .—

- 1. Գեորգ Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան ,
խորհրդական կրօնական գործոց :
- 2. Մեծ Միքայէլ Եփ. Մովսէսեան , խորհրդական յա-
րաբերական գործոց :
- 3. Մեծ Տիգրան Էփ. Եսուսեան , խորհրդական
ներքին գործոց :
- 4. Մեծ Սերովբէ Էփ. Ազնաւոր , խորհրդական
դատական գործոց :
- 5. Մեծ Միքայէլ Եփ. Մամիկոնեան , խորհրդական
կրթական գործոց :
- 6. Մեծ Գարեգին Էփ. Մէլիքեան , խորհրդական
անտեսական գործոց :

—Եկեղեցական և վանական կալուածոց ար-
քունի արոց մտան Պատրիարքարանն Բ.Գրան
հետ բանակցութեան մտած լինելով, այժմ Բ.
Գրան պատասխաներ է թէ՛ որոշուած է սուրբ
չառնու միայն այն տեսակ կալուածքներէ ու-
շէնքերէ որք ոչ տարեկան և ոչ ամսական եկա-
մուտք մի չեն բերեր, ինչպէս են եկեղեցիք,
վարժարանք, վանք, հիւանդանոցք և այլ սոցա
նմանք :

—Յաւօք որտի կարգացինք Մասիս լրագրի 2
779 թուոյն մէջ իւր միամեայ դադարման հա-
մար լրագրական վերատեսչութեան կողմանէ ի-
րեն զրկուած պաշտօնական զեկուցումը, և նոյ-
նին վրայ խմբագրական գիտողութիւններն, որք
ուշադրութեան արժանի են :

—Զմիւռնիոյ գաւառական ժողովն իւր 19րդ

նիստն դուրսդրեց անցեալ նոյ. 25 երեքշաբթի օ-
րը ընդ նախագահութեամբ Գեորգ Ս. Առաջնորդ
Հոր և տեսնապետութեամբ Պ. Գրիգորի Չիլին-
կիրեան : Ատեանը բացուեցաւ ժամը 4 1)2 ին և
վակեցաւ 6 ին : Օրակարգին նախագահ խնդիրն
էր, ազգ. երկնացոյցի հաւասարակշռութիւն, որ-
ոյ մասին եղած խորհրդակցութիւնք սա կէտին
յանգեցան թէ՛ ազգային արկղին վրայ ծանրա-
ցող տնկոսաւոր պարտուց բարձման կամ գոնէ
թեթեւացման համար արագ և գործունեայ
հոգատարութիւն լինելանհրաժեշտ է : Վանս-
որոյ և գաւառ. ժողովն ազգային պարտուց բարձ-
ման յանձնաժողովի կազմեց, պաշտօն տալով
նմա որ սոյն ամենակարեւոր խնդիրն ըստ ամե-
նայն հանգամանաց քննեն, խորհրդակցին, և
ազգ. պարտուց բարձման կամ թեթեւացման
միջոցներ գտնելով իրենց աշխատութեան ար-
դիւնքն տեղեկագրեն գաւառ. ժողովոյն :

Ազգ. պարտուց բարձման նորակազմ յանձնա-
ժողովոյ անդամքն են

- Գեորգ Առաջնորդ Ս. Հար ,
- Մեծ Մ. Կարապետ Ա. Սպարթալեան
- « Մ. Գեորգ Ակասեան
- « Յովհաննէս Զաքրեան
- « Ստեփան Վարպետեան
- « Մերկեր Մերկերեան

Սոյն նորակազմ յանձնաժողովն արդէն իւր
առաջին նիստն ըրաւ :

—Ազգ. վարչութիւնն գովանի գործունէու-
թեամբ կ'աշխատի չա աստանի սովելոցի նպաստ
Ձրդ հանգանակութեան գործն յառաջացնել
և արդիւնաւորել : Գեորգ Առաջնորդ Ս Հայրն Հայ-
աստանի սովելոց արդետալի վիճակն նկարագրե-
լով ազգու քարոզչութեամբ Սթեփեղեցույ մէջ,
յիշեցնելով համայն ժողովրդեան իրենց մեծ
պարտականութիւնն առ սովատանը եղբարս որ,
թէ կրօնական, թէ մարդասիրական և թէ ազ-
գասիրական սուրբ պարտաւորութիւն մի է :

Ազգ. վարչութիւնն փութաց տիրանայց ամանա-
խումբ մի կազմել որք պաշտօն ունին արժ. տր-
դաւելի և տր. Գաւառիկ հոգեւոր քահանայից
հետ շրջագայելով որոմասիրտ սիրկնայց նուիրա-
տուութիւններն ժողովել և յանձնել իւր վար-
չութեան :

Յիշեալ տիրանայց ամանախումբն անդամքն են .

- Երեցակին տր. Աւետիս քահանայի
- Հռիփսիմէ Յ. Սիմոնքեան
- Մարիցա Նահիկեան
- Զափինա Ալեքսանեան

Ազգ. վարչութիւնն փութաց նոյնպէս հրաւի-
րել իւր նիստին ազգային արհեստաւորաց մեծե-
րէն իւրաքանչիւրն, և յորդորեց որ նոյն ար-

հետի պատկանեալ ամեն ազգային և թէ հետը
է՛ նոյն իսկ օտարազգի որոմասիրտ անասներէ
ժողովն) սովելոց նպաստներ և բերեն յանձնեն
Ազգ. վարչութեան Ազգային արհեստաւորներն
այս կարեւոր գործին համար աշխատելու հրա-
ւիրեալ բարեւէր անձինքն են .—

- Պ. Սովսէս Եանըքաչեան
- Պ. Մեսրոպ Ղազարոսեան
- Պ. Խաչատուր Էօտէմիշցի
- Պ. Սիմօն Թէքլըբեան
- Պ. Աբրահամ Պէրդամալեան
- Պ. Պաղտասար Ճէրմակեան
- Պ. Առաքել Կէօմլէքսիզեան
- Պ. Մկրտիչ Եսայեան
- Պ. Յարութիւն Կողկողեան

Թէ սոյն յարգելի Արհեստաւորաց և թէ վի-
րոյնեալ ճիկնայց յանձնեցան պաշտօնական նուիր-
ատութեան բաւական քանակութեամբ ըստ հրա-
հանգի կեդրոնական յանձնաժողովոյն :

Նոյնպէս Ազգային վարչութիւնն արժանապա-
տիւ տէր Յովհաննէս քահանայ Միտասեանը և
Մեծ Պ. Ստեփան Աղաճանեանը կարգեց ի պաշ-
տօն շրջագայելոյ առ վաճառական օրպէս զի
հաւաքեն և նոցա նուիրատուութիւնք և յանձ-
նեն Ազգային վարչութեան : Սոցա ևս յանձնե-
ցան բաւական նուիրատուութիւնք :

Ազգային վարչութիւնն փութաց նաև յատուկ
գիրքով ըստ բաւականի պաշտօնական նուիրա-
տութեան յուշարկել քաղաքիս ազգային բարեգոր-
ծական ընկերութեանց որք են Աղքատասիրաց
բազմամեայ և բազմօգուտ ընկերութիւնն, Սիւ-
նեաց՝ հին անուամբ նորոգ սկսուած ընկերու-
թիւնն և Անձնուէր ազգուցուտ ընկերութիւնն :

— Ազգային վարչութեան՝ Երուսաղէմի պար-
տուց բարձման խնդրոյն համար աշխատասիրած
գործողութիւնքն ևս յաջորդ թերթով պիտի
ժանուցանեմք :

— Ազգային վարչութիւնն քաղցր պարտու-
րութիւն մի կատարեց այս օրերս յատուկ շնոր-
հակալութեան գիր ուղղելով առ մեծապատիւ
Եսայեան եղբարս Յակոբ և Ստեփան աղայս,
որք ըստ բնարոյս բարեպաշտութեան իւրեանց
անձնական ծախիւք ի գրուի հանցին Պուրնօ-
վոյի եկեղեցույ՝ վերջին մեծ գետնաշարժէս
պատճառուած աւերմանց նորոգութիւնն մեծա-
ծախ և վայելչազարդ յորինուածովք : Մեծապա-
տիւ եղբարք Եսայեան յիշեալ սուրբ եկեղեցույ
կից գեղեցկաչէն զանգակատուն մի ևս ի հիմանց
նորոգ կառուցին : Այսօրինակ բարեպաշտական
առատաձեռնութիւնք ևս ազգային մեծ գոհու-
նակութեան արժանաւոր են : Յիշատակելի ար-
ժան է զի մեծապատիւ Եսայեան եղբարք յիշեալ
եկեղեցույ վերայ ի բնէ անտի յատուկ խնամք
և հոգատարութիւններ ըրած են :

— Ըստ որոշման Գաւառական ժողովոյ՝ Ազգա-
յին վարչութիւնն շրջաբերական գիրք ուղղեց
առ այն ազգայինս որք ղինուորական տրոց մնա-
ցորդ պարտք ունին Տաճկաց 1285 թուականէն
սկսեալ մինչ 1294 թուականը, զոր գայմէով
վճարելու համար կարճատե արտօնութիւն մի
շնորհուած է անդական կառավարութեան, նաև
պարտք ունին Տաճկաց 1295 թուին տուրքի հա-
շուէն, և որոյ մասին յայտարարուած է որ հինգ-
նոցը 100 փարայէն պիտի վճարուի ըստ պաշտօ-
նական հրահանգին : Ազգային վարչութիւնն յի-
շեալ շրջաբերական գրով կ'իմացընէ ամեն
պարտք ունեցող ազգայնոց որ Բարձրագոյն
Գոնէն եկած և տեղական կառավարութեան
միջոցաւ Ազգային վարչութեան հաղորդուած
հրամանագրոյն համեմատ ամեն ոք փութայ իւր
պարտքը վճարելու մինչև ներկայ Գեկտեմբեր
ամսոյս վերջին օրը, և իւր անուը մնացորդ
պարտուց տոււարէն շնջելու, վասն զի յիշեալ
պայմանաժամէն զինի Ազգ. վարչութիւնն պար-
տաւորուած է պարտուց մնացորդը վճարողան-
ձանց անուններու ցուցակը, ըստ պահանջման
Բարձրագոյն Գրան հրամանագրոյն, տեղական
կառավարութեան յանձնելու :

Տարակոյս չկայ որ ամեն ազգայինք իւրեանց
օգուտն ու պատիւը մտածելով պէտք է վճարեն
իւրեանց պարտքն որոշեալ պայմանաժամու
լրանալէն առաջ :

Եռ, Գափի, Եէլա, Մօրլա, Փալէսմաթափօ,
Վաթուսս, Էրէսս, Բուսթարա, Փէթրա, Գա-
լմիա, Ալլա, Գէլանիա, Անէմաթիա, Մուսու-
թափօ, և այլն : Կղզոյն և շրջակայ գիւղորէից
մէջ երեսուցի չափ ալ Հայեր կան, մէկ մասն
կոստանդնուպոլսեցի, մէկ մասն Զմիւռնացի և
մաս մ'ալ վանցի ու կարնեցի : Կոստանդնու-
պոլսեցի Հայերէ մի քանին Գէմալպէյի քով լա-
նազան կարգի պաշտօններ ունին, ոմանք ալ
կառավարութեան տասնորդական (աշար) գոր-
ծերու վրայ կ'ըզբաղին : Կարնեցի և վանցի
Հայերն ալ իւր հանելու գործարանաց և մաքսի
մէջ կ'աշխատին :

Զէթի, օճառի և ցորենի գործարաններն օր
ըստ օրէ կը շատնան յինչպէս որ իմ հոն գտնուած
միջոցիս բերդին ծովեղերեայ կողմն նոր եռա-
յարկ գործարանի մը բացման համար էսը կատա-
րեցին :

Միտիլլի մէջ Յոյնք երկու եկեղեցի ունին .
որոցմէ մին քարուկիր, բաւական մեծ ու շքեղ
է . Լատինական եկեղեցի մ'ալ կայ, Կղզոյն
բնակիչք շրջակայիւք հանդերձ 100,000 հոգւոյ
չափ կը հաշուին, որոց 90,000ը Յոյն են և գրե-
թէ 10,000ը Տաճիկներն ալ երկուսու դպրոց ունին
նորայէն, ուր առաջին անգամ տեսի Եւրոպա-
կան ձևով գրասենյակներ և ուրիշ ուսմանց վե-
րաբերեալ զանազան գործիք ու գրեանք :

Կը փափաքէինք որ փոքրիկ Հայ գաղթակա-
նութիւն մ'ալ հաստատուէր սոյն կղզոյն մէջ .
և այս բանին համար, ինչպէս որ ուշով քննե-
ցինք, շահաւէտ և օգտակար գործեր չեն պակ-
սիր մերայնոց :

Այս գաղթականութեան՝ կրնան ոյժ տալ
Զմիւռնացի Հայք, եթէ առևտրական գործե-
րու, ինչպէս մանիֆաթուրայի, չուխայի և ու-
րիշ մանր մունր ապրանքներու ճիւղմը հաստա-
տեն հոն :

Երբ այս գաղթականութիւնն իրականայ, ի
հարկէ քահանայ մ'ալ կը զրկուի հոն, և քիչ
ժամանակի մէջ փոքրիկ մատուռ մ'ալ շինուե-
լով՝ նոյն տեղի ազգայինք զուրկ չեն մնար հո-
գեւոր միջիտարութիւններէ . վասն զի, ինչպէս
որ քանի մը հոգիներէ լսեցինք, երբեմն մահա-
մերձ հիւանդ և մեռեալներ կը պատահին և
անոնց հոգը Յոյն քահանայք կը կատարեն :

Զմուռնամ ըսելու որ մեր բարեկամ Յարու-
թիւն Էփէնտի Պուպիեան շատ հոգ կը տանի
որ փոքրիկ գաղթականութիւն մի հաստատուի
հոն Հայերէն որ ապագային շատ կը զարգանայ,
և այս բանին վերայ ստեպ մեզի հետ խորհրդա-
կցած է :

Մեծ յոյս ունիմք որ մեր առևտրոյ ներհուն և
բանիւրուն ազգայինք այս խորհուրդէն օգուտ
կը քաղեն :

Զմիւռնիա, Նոյեմբեր 1880 : Ե. Բ.

— Վիճակիս պատուարժան Ուսումնական խորհուրդին ամենայն դորձունեթեամբ կ'աշխատի ազգային կրթութեան գործոյն հաստատուն ընթացք և կանոնաւոր ուղղութիւն մի տալ։ Այլ չեալ պատուարժան խորհուրդն քաղաքիս ազգային կրկին վարժարանաց յարմար կանոնադիր և ծրագիր յորինելն զկնի, որ երեսիտիս ժողովոյ վաւերացմամբ արդէն գործադրութեան մէջ է, այժմէս թեմական դպրոցներու յարմար ծրագիր մի պատրաստեց և տպեալ չըջարեալ կանաւ ուղղեց զայն առ թաղական խորհուրդն Չմիւռնիոյ թեմերու։ Քաջայայտ եմք որ սոյն չըջարեալն ծրագրոյն կիրառութեամբ թեմական խորհուրդն ևս պիտի օգտին։ Ահաւասիկ չըջարեալն օրինակը։

ԵՐԱՅԱՐԱԿԱՆ ԱՌԹԻՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՅ

Պատուարժան Ատենապետ

Թաղական խորհրդոյ

Վիճակիս Ուսումնական խորհրդոյ պարտաւորութեանց մին է թեմական դպրոցներու բարեկարգութեան և յառաջադիմութեան վրայ հսկել և անոնց կրթական վիճակին միօրինակ և տեղոյն յարմար ուղղութիւն մը տալ։ Այս պարտաւորութիւնը փութով ի դորձ դնելու յորդորուեցաւ երբ Գեր. Առաջնորդ Ս. Հայրն իր թեմական այցելութենէ ի դարձին լիով անդեկութիւններ հաղորդեց մեզ թեմական դպրոցներու անկայուն և անգոհացուցիչ վիճակին վրայ։ Ուսումն. խորհուրդն արժան դասեց յօգուտ թեմական դպրոցներու պարզ և միօրինակ ուսմանց ծրագիր մը յորինել, նոյնպէս ուսումնական համաւոս հրահանգ, և պատրաստել դասագրեանց ցուցակ մը։ Ծրագիր, Հրահանգ ու ցուցակ սոյն չըջարեալն խորհրդոյ, ինչպէս նաև առ Չեղ ուղղելով, Ուսումն. խորհուրդը յասկապէս կըլինդրէ որ Չեր դպրոցն անոնց համեմատ վարելու և կար դադարելու փոյթ տանիք, որպէսզի փափաքելի արդիւնքը ձեռք ձգէք։

Ուսումն. խորհուրդը որոշած է նաև տարուան մէջ մերթ ընդ մերթ յատուկ տեսուչներ զրկել թեմերն որ անձամբ ստուգեն, կարգադրեն ու տեղեկագրեն ծրագրին գործադրութիւնն և կրթութեան վիճակը. նոյնպէս պատրաստ է ի դիւրութիւն թաղական խորհրդոյ, որոշուած դասագրեանքը Չեղի հասցնել երբոր անոնց ցուցակին հետ դիմն ալ իրեն յուղարկէք։

Ուս. խորհուրդը քաջայայտ է որ Չեր դպրոցին յառաջադիմութեան համար ջանք ու խշնաւք չէք զլանար և իրեն կ'աջակցիք այն ամեն կարգադրութեանց մէջ որ նպատակ ունին ազգային կրթութեան կանոնաւոր և արդիւնաւոր ուղղութիւն մը տալ թեմական դպրոցներուն մէջ։

Ի դիմաց Ուսումն. խորհրդոյ

Ատենապետ, Պողոս Յ. Տիւրքերեան
Ատենադիր, Մեսրոպ Սիմոնեան։

Չմիւռնիա, 1880

- Ծրագիր թեմական դպրոցներու
- 1. Կրօնք
- 2. Հայերէն
- 3. Գիր, Օրինակութիւն
- 4. Ուղղագրութիւն
- 5. Գեղագրութիւն
- 6. Թիւ և Հաշիւ
- 7. Աշխարհագրութիւն
- 8. Ազգային Պատմութիւն
- 9. Տաճկերէն
- 10. Երգ

Գործածելի Դասագիրք

- 1. Նոր կտակարան Մուրատեանցի
- 2. Այբբենարան Տէպեանց
- Նոր ընթացարան Մամուրեանի
- Գիտելիք Պարտիք
- Գերականութիւն Գործն. Գարագաշեան
- 5. Գեղագրութեան Տեարներ Ղ. Սարկեանի
- 7. Աշխարհագրութիւն Արամեանի

- 8. Ազգային Պատմութիւն Կուրճեանի
- 9. Անգլիական Լիկիոյ Բիւրոյի աշխատիք
- 10. Նոր Երգարան Տեառնեանի

Համաւոս Հրահանգ Ուսումնական
Վերայիշեալ ծրագրին համեմատ

1. Ուսումնական խորհուրդն ամեն կարգադրութեան և կարգադրութեան արդիւնքը Նախ Նոր կտակարանի դասին բովանդակութիւնը յատուկ սեպարակի մէջ գրելու առ, եթէ աշակերտը գրելու կարողութիւն ունի, և սույն նոյն պատմութեանը կրկին և մի քանի աշակերտաց պատմութեանը կրկին ևս ևս յարգ գասին բերանացի պատմելով աշակերտաց, առանց սույն հարցումներ ուղղելու։

2. Ընթեմանուր և կարգադրութեան արդիւնքը պարզ առգանութեամբ, նոյնք յատուկ տեսարակի մէջ օրինակել տալով հասարակ բաները և խնամանքը բացատրել, և աշակերտին պատմել և բացատրել տալ։ Ըստ կարողութեան դասարանի նոյն հասարակ ուղղութեան մէջ վերլուծել, բացատրել կարգութիւնը մեկնել, ու խնամանքը համաւոսել տալ։

3. Գարագաշեանի Գործնական Գերականութեան համեմատ գատուակել և գրառար տեսարանն ընթեմանուր և կարգադրութեան ընթեմանուր։

4. Ընթեմանուր թեմական դաս օրինակել, առանց պարզ ու մտքոր գրելու վարժեցնել մե տախտակին վրայ մերթ ընդ մերթ օրինակներ տալով և տառերու քաղաղ լինելը գիտելու նշանակելով։

5. Ընթեմանուր և կարգադրութեան համեմատ իրենց կարգը և կարգը աշակերտին գրելու առ, և այս առթիւ անպակաս առ բարդ բաներու վրայ վարժութիւն ընթեմանուր։

6. Տարեկան անտիպ գեղարդ բաներ օրինակել ներ տալ և հսկել վարժարանի վրայ գրելու և թեմական դպրոցն անտիպ և քաղաղ լինելը մը պատահելու գրելու ժամանակ։

7. Մասաւոր ու գրառար։ Առանց թեմական գործածելու մտքը զանազան պարզ գերծաղութիւններու վարժեցնել, մասաւոր գրառարութեան և համար, սոյն թեմական դպրոցներու ըստ կարգի բացատրել, և չորս գործադրութիւնները սովորեցնել մեզ թեմական դպրոցները գործածելու և թեմական ու պարզ լինել օրինակներ մէջ բերելով։

8. Նախ առանց տեղական աշխարհագրական ծանօթութիւններ, ապա Փոքր Ասիա և անոր գիտութեան քաղաքները մասաւոր ծանօթութեամբ և վերջը թեմական տեղեկութիւններ աշխարհագրական գիտութեան վրայ առանց թեմական վրայ առանց թեմական վրայ բացատրութիւն տալով և միշտ օրինակներ ու աշխարհագրոյ տախտակներ գործածելով։

9. Հայկազանց, Արշակունիաց, Բագրատեանեաց դիւանոր գեղարդն առանց թեմական միշտ բանաւոր ընթեմանուր հետեւելով, այս է բովանդակութիւնը ապա ևս պատմելու արդ բերանացի, գտնին կարգադրութեան նոյն ժամայն կրկին աշխարհագրոյն ուսմանց և նոյնք յարգ դասին պատմել առ աշակերտաց խորհրդ յատուկ ոճով, առանց երբէք գոց բնեւորելու։

10. Գրել և կարգադրութեան խնամար քաղաքներ, մերթ ընդ մերթ Հայերէնի թեմական ներտալ Տաճկերէն կտոր մը և Հայերէնէ Տաճկերէն մանր մանր առեւտրական նախախնար և այլն շարագրութեան նիւթ տալով։

11. Եկեղեցական երաժշտութիւն ուսումնական և միանգամայն ժողովրդային ու հայրենասիրական երգեր։

ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Մեր երկու թաղապետութեանց միաբան որոշմամբ հետեւեալ ցուցակը քաղաքիս դիւանոր թաղերու մէջ ի տեղեկութիւն հասարակութեան գրուեցաւ։
Այս ցուցակը կը ծանուցանէ ճանապարհորդաց և բեռներու տեղափոխութեանց սակագիրը, որ

պէտք է գործադրի Յ. Գեղեցիկեան 1880 թ. առաջին շաբաթը պարսկեան և ներս մտնող ուղեորներին իրաւունք ունին պահանջելու միայն մէկ դահլիս հասարակ ստակ, երբ սորա բեռն կամ ծրար չունին։ Եւ երկու դահլիսեան եթէ բեռն կամ ծրար ունին։

2. Ամեն ուղեոր ծրար ունեցող և չունեցող, եթէ յատուկ նաւակ մի կը վարձէ գորս երեւու համար, պէտք է նաւավարին վճարել ութ դահլիս հասարակ ստակ։

3. Ամեն ուղեոր կամ ծրար ունեցող, որ նաւակ մի վարձու կը բռնէ, պէտք է չորս դահլիս միայն վճարէ նաւավարին։

4. Ամեն զինուորական անհատ միայն մէկ դահլիս պէտք է վճարէ։

5. Նաւահանգի խառն գորս այս գիտները կրկին պատիկ են։

6. Այն նաւավարը որը ուղեորներ կը տեղափոխեն կամ նորեկ նաւու մի վերայ երթալով ներս կը մտնեն առողջութեան պաշտօնատունէն առանց քաղաքի տարուելու, առաջ, մէկ արժանի Մեծիօտի տուգանք պիտի վճարեն պատժական օրինաց 254 երոզը յօդուածոյն համեմատ։

ԱՌԹԻՄԱԿԱՆ

Քաղաքիս առեւտրական ընթացքն ի հանդարտութեան դրանի։ Եթեմեկիս մէջ եղած վաւարմանն ի հետեւեալն են։

ԱՅՅՅՅ. Եօզուրմա 55 կողով չէքին 200 զուրուչի։ Գարահիսար 6 կողով ընտիր տեսակէն չէքին 207 զուրուչի։ Անցեալ տարուան հունիս 12 կողով չէքին 195 զուրուչի։

ԱՄՄՄՄ. Վեց հարկը հակ մեքենայուած կենս պիտար 390 զուրուչի, 60 հակ Ատանայի ապրանք կենս պիտար 360 զուրուչի, և 30 հակ ընտիր տեսակէն կենս պիտար 395 զուրուչի։

ՓԱՄՄՄՄ. Անցեալ եթեմեկէն աւելի վաճառման եղան, որ է 13,000 կենս պիտար ի գին 97 — 105 զուրուչի։

ԲՈՒՐՐ. Անգործութեան մէջ դրանի։

ԾԱՆՈՒԹՈՒՄ

Պատիւ ունիմ քաղաքիս աշխուհի Տիւրքերեանց և Օրիորդաց ծանուցանել թէ Չընարը փողոցը թիւ 19, ինքնակրթեան մէջ ձեռագործի վերաբերեալ տեսակ տեսակ ապրանքներ կը ձախարհին, ինչպէս են քարտիկ, տետր, բուրդ, պաշտ, փէշիկ, քորտեւա, չէրիա, տիւրպետ, և այլն, և այլն։

Նոյնպէս կը ձախարհի իմ քով դաշնակի դասատու պարտի Բոգէրի ամենալաւ փութրան։

Ամեն ջանք ի դորձ պիտի դրուի ազնիւ Յաճախորդները գոհ ընելու և ամեն տեսակ յանձնարարութիւնները սիրով կատարելու։

Վրթանէս կիւրեղեան։

Արշալուսոյ Արարատեան նախընթաց թուոյ առաջին երեւին բանասիրական մէջ հետեւեալ տպագրական վրիպակները կը վաճառուեն անկողնային ուղղելու։

Առաջին էլ չորրորդ տող լաւ պէտք է ըսն կարգադրել։

Երկրորդ էլ ութ երորդ տող Բարեբաղդութեան պէտք է բարեպաշտութեան կարգադրել։

Երկրորդ էլ քսանութ երորդ տող կարգի պէտք է քսանութ կարգադրել։

Երրորդ էլ քսանութ երորդ տողին մէջ եղած վրիպակները աւելորդ է և անոր յետագա բառին սկզբնատուր դիտարար պիտի չլինի։

Տէր Լրագրոյս,
Գ. Մ. Պ. Պալարայիւն։